

ԳԱՐԵԳԻՆ ԿՈՆՐԱՊԵՏԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Posted on July 26, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Պարզեւ Դաւիթեան, Թորոնթօ, 24 Յուլիս 2018

«Նոր Հայաստան, Նոր Հայրապետ» կարգախօսով առաջնորդուող հայաստանցիներու դիմաց կանգնած Հայ Առաքելական Եկեղեցւոյ պաշտպան սփիւռքահայ զինուորագրեալները վերջերս ողողեցին մամուլի էջերը՝ իրենց այլազան պատճառաբանութիւններով տեր կանգնելու մեր անանդական նկատուող սրբութիւններուն: Ու թէեւ քանի մը տասնեակ հայաստանցիներու անկարգութիւններն ու ատելալառ եւ ամօթալի յայտարարութիւնները էջմիածնի արքայ Գարեգին կղերապետին հասցէին ուղղուած որեւէ ձեւով ընդունելի կարելի չէ նկատել, եւ պատշաճութեան սահմաններուն անտեսուիլը անոնց կողմէ պետք է քննադատել ու մեղադրել, սակայն եւ այնպէս սրբութիւնները պաշտպանելու հեւքին ծառայող սփիւռքահայերը պետք է գիտնային Նոյն բժախնդրութեամբ պաշտպան կանգնիլ այդ սրբութիւններուն, երբ սրբահոգատար սպասարկուները քսան տարուան ընթացքին իրենց սրբապղծութեամբ արգահատանքի աստիճանին հասցուցին ժողովուրդին ունեցած զգացումը իրենց հանդէպ:



[Medialab](#)

Փաշինեանի քայլին հետեւող մեր հայրենի ժողովուրդը Նախկին իշխանութիւնը տապալելու իր խանդավառութեան ծալքերուն մէջ անկասկած որ ունի այդ իշխանութեան «հոգեւոր» իշխանակիցը տապալելու տենչը, բան մը, որ չունի «հեռուն հեռու» սրբութիւններու սեր քարոզող սփիւռքահայը, որ չճաշակեց Նախկին իշխանութեան սանձարձակ ժողովրդավատ քաղաքականութիւնը:

Մեր Պարզեւ Դաւիթեան, Թորոնթօ, 24 Յուլիս 2018

«Նոր Հայաստան, Նոր Հայրապետ» կարգախօսով առաջնորդուող հայաստանցիներու դիմաց կանգնած Հայ Առաքելական Եկեղեցւոյ պաշտպան սփիւռքահայ զինուորագրեալները վերջերս ողողեցին մամուլի էջերը՝ իրենց այլազան պատճառաբանութիւններով տեր կանգնելու մեր անանդական նկատուող սրբութիւններուն: Ու թէեւ քանի մը տասնեակ հայաստանցիներու անկարգութիւններն ու ատելալառ եւ ամօթալի յայտարարութիւնները էջմիածնի արքայ Գարեգին կղերապետին հասցէին ուղղուած որեւէ ձեւով ընդունելի կարելի չէ նկատել, եւ պատշաճութեան սահմաններուն անտեսուիլը անոնց կողմէ պետք է քննադատել ու մեղադրել, սակայն եւ այնպէս սրբութիւնները պաշտպանելու հեւքին ծառայող սփիւռքահայերը պետք է գիտնային Նոյն բժախնդրութեամբ պաշտպան կանգնիլ այդ սրբութիւններուն, երբ սրբահոգատար սպասարկուները քսան տարուան ընթացքին իրենց սրբապղծութեամբ արգահատանքի աստիճանին հասցուցին ժողովուրդին ունեցած զգացումը իրենց հանդէպ:



[Medialab](#)

Փաշինեանի քայլին հետեւող մեր հայրենի ժողովուրդը նախկին իշխանութիւնը տապալելու իր խանդավառութեան ծալքերուն մէջ անկասկած որ ունի այդ իշխանութեան «հոգեւոր» իշխանակիցը տապալելու տենչը, բան մը, որ չունի «հեռուէն հեռու» սրբութիւններու սեր քարոզող սփիւռքահայը, որ չճաշակեց նախկին իշխանութեան սանձարձակ ժողովրդավատ քաղաքականութիւնը:

Յետոյ, ինչո՞ւ շփոթել սուրբ գահը իր անսուրբ գահակալին հետ եւ ո՞ր շնորհքներուն համար է, որ այդ գահակալը կը պաշտպանուի ու կը փառաբանուի: Իր հարուստ բարերարներուն եւ գործակիցներուն կոնդակներ բաշխելո՞ւն եւ անոնց նիւթականով ոսկեզօծ կառոյցներ բարձրացնելո՞ւն համար, կամ թէ նախկին իշխանութեան հիմերը կանգուն պահելու ծառայած իր ըրած աղօթքներուն համար: Գահակալին զինուորագրեալ պաշտպանները յօդուածներով կը խօսին լուռ մեծամասնութեան մը մասին հայրենիքի եւ սփիւռքի մէջ, որ Էջմիածնի վեհութեան ու սրբութեան կը հաւատայ եւ որ, ըստ իրեն, դէմ է գահակալին դէմ կատարուած ապստամբութեան:

Արդեօք անոնք չե՞ն գիտեր, թէ մեր ժողովուրդին մեծամասնութիւնը արգահատանքով կը հետեւեր գահակալին ինքնասեր եւ բռնատեր վարուելակերպին, որու պատճառաւ քանի՞ թեմական մարմիններ եւ եկեղեցասեր ազգայիններ իրենց նախընտրած առաջնորդներուն եւ հովիւներուն կողքին կանգնած ըլլալուն համար բարոյալքուեցան կամ չէզոքացուեցան: Իրենց սիրելի գահակալը քոչարեանական կամ սարգսեանական իշխանածեւ որդեգրելով՝ պաշտօնագրկեց Ֆրանսայի նախկին սիրուած առաջնորդը եւ քմահաճօրէն ստիպեց, որ Գանատայի թեմին կողմէ ընտրեալ առաջնորդ մը հրաժարի: Եւ դեռ քանի՞ կարող եւ ժողովուրդին յարգանքը վայելող կղերական սպասարկուներ սքեմագրկուեցան կամայականօրէն, որովհետեւ կը նախընտրէին ծառայել իրենց հօտերուն, փոխանակ ծառայելու իրեն: Այդ ուժը ան կը ստանար ժողովուրդին ատելութիւնը վաստակած իշխանութենէն, եւ նոյն ձեւով գործելու ուժը կը ստանան ուրիշ աթոռակալներ իրենց կռակը կանգնած կուսակցական ուժերէ՝ ժողովուրդէն սիրուած եւ անոր ծառայող Տէր Մեղրիկ առաջնորդ մը Գանատայէն դէպի Անթիլիաս փոխադրելով:

Թող ոչ մէկ հայ ուրիշ հայու քարոզ չկարդայ սուրբ Էջմիածնի սրբութեան իմաստին մասին: Անաստուած, անհաւատ եւ նոյնիսկ համայնավար հայը երբեք չէ խարխափած իր ազգային հաւատքին եւ հայ Քրիստոսի արժեքին առջեւ ծնրադրելու եւ չէ վարանած անոնց համար իր կեանքը զոհելու: Մեր կարող հոգեւորականներէն Հայր Կոմիտաս Վարդապետ վերջերս հեռատեսիլի հայկական կայանի մը առջեւ ընդունեց, որ ԲԱՐԵՓՈՒՆՈՒԹԻՒՆ Է պետք մեր եկեղեցիէն ներս եւ յորդորեց «Նոր Հայաստան, Նոր Հայրապետ» ազմկարարներուն՝ իրենց բողոքները օրինաւոր ձեւով ներկայացնել նկատառութեան:

Ժամանակին, Մարթին Լութեր կոչեցեալ իմաստուն կղերական մը ապստամբեցաւ Վատիկանի Պապին դէմ եւ Բողոքական շարժումը յառաջացնելով՝ պատռեց նիւթական

որոշ արժեզիևի փոխան արքայութիւն ծախող փաստաթուղթերը Կաթողիկ Եկեղեցւոյ (1517 թ.): Հայ ժողովուրդը կը սպասէ հայ Մարթին Լութերը, որ խիզախութիւնը ունենայ եկեղեցին բարեփոխելու, վախազդու հին կերպարները վերածելու, եւ բողոքելու նիւթական նուիրատուութեան փոխան կոնդակներու վաճառման դէմ:

Գարեգին կղերապետին պաշտպանները իրենց թելադրուած եւ դժուար դերին մէջ կը նմանին Ամերիկայի ներկայ նախագահ Տանըլտ Թրամփը պաշտպանողներուն, որոնցմէ շատեր որպէս քրիստոնեայ քարոզիչներ բարոյականութիւն կը քարոզեն, սակայն եւ այնպէս անբարոյ նախագահ կը պաշտպանեն: Ծիծաղելի վիճակ մըն է, որով անոնք կամովին ինքզինքնին կը խայտառակեն յանուն չես գիտեր ինչ նպատակի կամ շահի: Արդեօք ի՞նչ շահի եւ նպատակի ծառայել կ'ուզեն Գարեգին չսիրուած կղերապետին պաշտպանները:

